ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1072-Ա « 21 » մարտի 2025թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 17.01.2025 թվականին հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-25/57» ծածկագրով Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման ընթացակարգին հայտեր ներկայացրած «Նախագծերի փորձաքննություն» և «ՎԻՌԱՄ» ՍՊ ընկերությունները (այսուհետ՝ Մասնակիցներ) խախտել են գնման ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով 27.01.2025թ. և 29.01.2025թ էլեկտրոնային փոստով և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով ստացված մրցույթի մասնակից «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ի գրությունները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 67-րդ կետով, ստուգել է մրցույթի բոլոր մասնակիցների քաղաքաշինության բնագավառում նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) գործունեության իրականացման գործող լիցենզիաների՝ համապատասխան ներդիրներով առկայությունը և պարզել է, որ «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 06960002) չունի քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության՝ 02.05 ենթատեսակների ներդիրներ, իսկ «ՎԻՌԱՄ» (ՀՎՀՀ 00232475) ՍՊԸ-ն չունի քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության՝ 02.01; 02.04; 02.05; 02.08 ենթատեսակների ներդիրները:

Գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ և 67-րդ կետերով, մերժել է Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

«ԵՔ-ԳՀԾՁԲ-25/57» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը 13.03.2025 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Նախագծերի փորձաքննություն» և «ՎԻՌԱՄ» ՍՊ ընկերություններին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ